# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2
## 15.05.2026թ. կնքված N «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-26/3» գնման պայմանագրի

ք. Երևան «29» հունիսի 2026թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Վ. Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Գնորդ) մի կողմից, «ՌԱՖԷԼԳՐԻԳ» ՓԲ ընկերությունը (այսուհետև՝ Վաճառող) ի դեմս ընկերության տնօրեն Ռ. Գրիգորյանի, (այսուհետ՝ Վաճառող), որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետև՝ Կողմեր), ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և հիմք ընդունելով 15.05.2026թ. կնքված N «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-26/3» գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 կետը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության գրությունը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Պայմանագրի թիվ 1 հավելվածով հաստատված՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին կից ըստ չափաբաժինների համար սահմանված հասցեներում կատարել հետևյալ փոփոխությունը.

**1-ին չափաբաժին.**

Ավան վարչական շրջանի սահմանված հասցեների 1-ին տողի «Ավան-Առինջ 1-ին մ/2 1/8 շենք», հասցեն փոխարինել «Ավան-Առինջ 1-ին մ/2, 3/8 շենք» հասցեով:

1.2 Նոր առաջարկվող հասցեում վերելակ տեղադրելու պարագայում վերելակի հիմնական չափորոշիչները՝ հարկերի թիվը, կանգառների թիվը և բեռնատարողությունը, չեն փոխվում, ինչի արդյունքում պայմանագրի գինը չի փոխվում:

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### *3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| Երևանի քաղաքապետարան | «ՌԱՖԷԼԳՐԻԳ» ՓԲԸ |
| ք. Երևան, Արգիշտիի փ. 1 | ք. Եղեգնաձոր, Շահումյան 20 |
| ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն | «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ |
| Հ/Հ 900012000635 | Հ/Հ 1150016580340333 |
| ՀՎՀՀ 02593108 | ՀՎՀՀ 08908014 |
| Վ. Պապիկյան ______________ (ստորագրություն) Կ.Տ. | Ռ. Գրիգորյան ______________ (ստորագրություն) Կ.Տ. |